


---

Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս. Բ. Հարությունյան (գիտական ղեկավար), Է. Ն. Խեմչյան, Ս. Ն. Խեմչյան, Ա. Կ. Պողոսյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 708 էջ +6 էջ նկ.:

Հայագիտությունը հարստացավ ևս մեկ կարևոր գիտական աշխատությամբ, որը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում:



«Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը» գիրքը ներկայացնում է Վանի նահանգի Մոկս գավառի հոգևոր մշակույթի բանահյուսական բազմաժանր ժառանգությունը: Մոկսի բանահյուսական նյութերն իրենց բազմաժանրությամբ, դեռևս անտիպ և ինստիտուտի արխիվներում պահպանվող մեծ ծավալի նյութերի ներգրավմամբ, ինչպես նաև զանազան տպագիր աղբյուրներում ցաքուցրիվ որոշ նյութերի համակարգմամբ ստեղծված այս ժողովածուն գալիս է լրացնելու ու ամբողջացնելու Մոկսի բանահյուսության՝ մինչ այս եղած աշխատությունների շարքը:

Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Սարգիս Հարությունյանը:

Գիրքն ունի կոռ կառուցվածք, հարուստ գիտական ցանկեր ու ծանոթագրություններ: Գիտահետազոտական խումբն ուսումնասիրել է մոկաց բանահյուսության բոլոր՝ տպագիր և անտիպ աղբյուրները, անձամբ եղել հայաթափված ու քրդերով բնակեցված պատմական Մոկսում, որն այժմ վերանվանված է Բախչիսարայ: Վանա լճի հարավային կողմում տեղակայված երբեմնի հայաշեն ու կենդանի այս տեղավայրի բանահյուսության պահպանումը և այն իր ժանրային համակարգի լիակատարությամբ ներկայացնելու մղումը գիտական խմբի անդամներին ներշնչել է նաև կորուսյալ հայրենիքի ցավի վերապրումը:

Գիրքը ստեղծվել է գիտահետազոտական խմբի միասնական ջանքերով: Աշխատանքն իրագործել են Սարգիս Հարությունյանը (ներածություն), Էսթեր Խեմչյանը (առաջաբան, ծանոթագրություններ), Մարինե Խեմչյանը (բարբառային բառերի բառարան, անձնանունների և տեղանունների ցանկեր), Աննա Պողոսյանը (բանահավաքների կենսագրություններ, բանահա-

վաքների և բանասացների ցանկեր): Բնագրերը որոնելու, համակարգելու և ժողովածուն կազմելու աշխատանքներն իրագործվել են աշխատանքային խմբի կողմից՝ Ս. Հարությունյանի ղեկավարությամբ: Գրքի լույսընծայումը հնարավոր է դարձել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ:

Աշխատությունը բացվում է ուշագրավ ներածականով, ուր քննվում են Մոկսի և մոկսեցիների ծագումնաբանության խնդիրները: Քննության ենթարկելով տեղանման առաջացման հարցը՝ վաստակաշատ բանագետը բավական ծանրակշիռ հետևությունների է հանգում: Պարզվում է, որ մ. թ. ա. VI դարում Հերոդոտոսի կողմից հիշատակված մարական Մոգեր կոչվող ցեղախումբը բնակվելիս է եղել ոչ թե Մարաստանում, ինչպես պնդում է ամերիկացի հայտնի իրանագետ Ռիչարդ Ֆրայը (էջ 6), այլ՝ Հայաստանում: Ս. Հարությունյանի այս պնդումը հիմնվում է, հատկապես, Միջնադարյան Հայաստանում վկայված երկու տեղանվան լեզվաբանական քննության վրա՝ Մոգք-Մոկսի և Մուխանքի (Արցախի գավառ, այժմ գտնվում է Մուղանի դաշտում), որոնք մոգ բառի հոլովված և հոգնակիակերտ ստացած ձևերն են՝ առաջինը՝ հայկական, երկրորդը՝ պարսկական հնչյունաբանությամբ: Քրիստոնեական ժամանակներում Հայաստանում Մոկս տեղանվան մեկնաբանությունը կապվել է Քրիստոսի ծնունդն ավետող արևելքի երեք մոգերի հետ, որոնցից մեկը՝ Գասպարը, հայրենիք վերադառնալիս հիվանդացել, մահացել և թաղվել է Մոկսում: Ս. Հարությունյանի ներածական խոսքը ցույց է տալիս, որ Մոկս տեղանվան՝ մոգերից առաջացումը ոչ թե ժողովրդական ստուգաբանության արդյունք է, ինչպես նշում է Հովսեփ Օրբելին (էջ 7), այլ՝ գիտական: Մ. թ. ա. VI դարում, երբ Վանի թագավորությունը նվաճվում է Մարաստանի կողմից, տեղավայրը դառնում է մարական «Մոգեր» կոչվող ցեղախմբի հայրենիք: Նախապես լինելով լոկ էթնիկական անուն՝ հետագայում մոգ բառը սոցիալական ընկալում է ստացել, քանի որ Հերոդոտոսի հիշատակած մոգերից են սերել զրադաշտական կրոնի քրմերը, որոնք, կրոնի քարոզիչներ լինելուց բացի, երգում էին նաև աստվածներին նվիրված ծննդաբանական հիմներ, վիպական երգեր և զբաղվում գուշակություններով: Գուշակության ու հմայական արվեստի հետ հնում սերտորեն առնչվել է նաև բրդի մշակումը, որով հայտնի են եղել մոկացի զգրարները: Փաստորեն, հնագույն նախնիների այս կարևոր գործառույթների ժառանգորդներն են մոկացիները, ովքեր տարածաշրջանի երկրներում հայտնի են դառնում որպես արհեստագործներ և վիպողներ:

Ս. Հարությունյանի այս հետազոտությունը նոր հայեցակետ է բացահայտում՝ ընկալելու մոկացիների բանասացության յուրօրինակ մշակույթի ձևավորման ընթացքն ու հնագույն մոզերից սերած մոկացի գրար-բանասացներին, ովքեր, Ս. Հայկունու հավաստմամբ, վճռական դեր են կատարել «Սասնա ծռեր» հերոսավեպի և հեքիաթների լայնահուն տարածման ուղղությամբ (էջ 9):

Ներածականին անմիջապես հաջորդում է առաջաբանը, որտեղ հանգամանալից ներկայացվում են Մոկսի պատմությունը, տեղաբնակիների գրադմունքն ու կենսակերպը, բանահյուսության ժանրային կազմի ընդհանուր առանձնահատկությունները: Տրվում են նաև Մոկսի բանահյուսության գրառման պատմությունը, բանահավաքներն ու նյութերի գրառման ժամանակագրությունը՝ մինչև ճակատագրական 1915 թ. և դրանից հետո: Ուշագրավ է, որ Մոկսի բանահյուսությունը մեծ մասամբ գրառվել է Մոկսից դուրս: Պատճառները երկուսն են. նախ՝ մոկացի բանասացները, ինչպես նշվեց, հիմնականում թաղիքագործներ ու գորարներ էին, որոնք շրջում էին Հայաստանում ու շրջակա երկրներում՝ այդպիսով Մոկսից դուրս բերելով տեղական բանահյուսական արժեքները, և երկրորդ՝ բանահավաքչության մի զգալի մասն իրագործվել է 1915 թ. հետո, երբ մոկացիներն արդեն տարագիր էին: Ժողովածուի նյութերի ուշ գրառումների մի մասը հիշողությամբ վերականգնել են նախկին մոկացիներ Ալեքսանդր Դարբինյանն ու Ավետիս Բարսեղյանը: Այդպիսով՝ ժողովածուն ընդգրկում է Մոկսի բանահյուսությունը՝ գրառված XX դարասկզբից մինչև 1970-ական թվականները:

Ժանրերի դասակարգված մատուցումը ի հայտ է բերում Մոկսի բանահյուսության ժանրային բազմաշերտությունը: Նախ ներկայացվում են վիպական սեռի ժանրերը՝ հեքիաթներն իրենց երեք տեսակներով՝ մեծ մասամբ իրապատում, առակներ, հերոսավեպեր, ավանդություններ ու ավանդազրույցներ, զրույցներ ու իրապատում զրույցներ, զվարճախոսություններ և հուշապատումներ: Բնագրերի երկրորդ բաժնում տեղ են գտել քնարական ստեղծագործությունները՝ վիպական, կրոնաձիսական, աշխատանքային երգեր, համբարձման և վիճակի երգեր ու խաղերգեր, սիրո, հարսանեկան, զավեշտական, մանկական և մանկախաղաց երգեր: Ասույթաբանական սեռի ժանրերը նույնպես բավական հարուստ դրսևորումներ են ի հայտ բերում մոկաց բանահյուսության համակարգում: Առած-ասացվածքների, դարձվածների, օրհնանքների և բարեմաղթանքների, երդումների, անեծքների, հայհոյանքների և սպառնալիքների, պարսավական ու առածային ասույթների, շուտասելուկների, մականունների և

գաղտնալեզվի նմուշների, հանելուկների ու աղոթքների տեղային յուրահատուկ տարբերակների նմուշներն ամբողջացնում են մոկաց բանահյուսության ժանրային հարուստ համակարգը:

Ժողովածուում առկա է նաև փոքրածավալ, բայց բավական հարուստ նյութեր ամփոփող հատված Մոկսի ազգագրության վերաբերյալ, ուր ներկայացվում են մոկացիների կենցաղն ու տոները, հավատալիքներն ու սովորույթները, խաղերն ու ծիսական խաղերը:

Աշխատության արժեքը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ընթերցողի դատին է ներկայացված մինչ օրս մեծ մասամբ արխիվներում պահպանվող՝ մեկ տարածաշրջանի բանահյուսական հարուստ ժառանգություն՝ ամբողջացված, դասակարգված, գիտական ծանոթագրություններով և բարբառային անհասկանալի բառերի ընդարձակ ու հարուստ բառարանով, այլև՝ այն ցավալի փաստով, որ ներկայացվող տարածաշրջանն այսօր այլևս չկա: Չկա այն ժողովուրդը, որն ապրում և ստեղծագործում էր իր հայրենիքում, պատմում էր բանավոր ավանդության այս գեղեցիկ նմուշները, չկա բարբառը, որով բանահյուսում էր հայ ժողովրդի այս ստեղծագործ ու շնորհալի հատվածը:

Գրքի առաջաբանում ցավով է նշվում, որ ուսումնասիրության ընթացքում՝ բարբառային անհասկանալի բառերի մեկնաբանությունները գտնելու նպատակով, հաճախ է աշխատանքային խումբը փնտրել Մոկսի բարբառին տիրապետող գեթ մեկ մարդ և չի գտել: Արարատի և Գեղարքունիքի գյուղերում վերաբնակեցված մոկացիների ժառանգներն այլևս չեն խոսում այս բարբառով: Եվ ահա բավական սովաբաժավալ այս ժողովածուն՝ մոկաց կենդանի խոսքարվեստով ու հյութեղ բարբառով, հիշատակի մի յուրօրինակ տուրք է դառնում պատմական Մոկսին և մոկացիներին:

Աշխատությունը կարող է գիտական աղբյուր հանդիսանալ բանագետ-բանասերների, պատմաբան-ազգագրագետների համար, ինչպես նաև հասարակության լայն շրջաններին հասու կդարձնի Մոկսի ժողովրդական բանահյուսությանն ու մշակույթին:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ